ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆՈՒՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРИ МАРЗ
ЕХЕГНУТИ ГЮХАПЕТАРАН

գ. Եղեգնուտ հեռ. (0237) 6-90-94 093 18 76 56

Թիվ _ - 58

« 02 » Մայիսի 2012 թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

Եղեգնուտի գյուղապետարանը ներկայացնում է հունվար ամսին Եղեգնուտի գյուղական համայնքի ղեկավարի թիվ 05, 06 որոշումները և թիվ 02 կարգադրությունը՝ համաձայն հավելվածների:

Առդիր 3 թերթ.

Համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Ստաց թիվ 4063-12
«02» 05 2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆՈՒՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРИ МАРЗ
ЕГЕГНУТИ ГЮГАПЕТАРАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

27 Ապրիլի 2012 թ. N 06

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. նոյեմբերի 10 – ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման կարգը հաստատելու մասին» N 1582-Ն որոշման 3 – րդ կետը և ղեկավարվելով նույն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. նոյեմբերի 10 – ի N 1582-Ն որոշման 3 – րդ կետի Եղեգնուտի համայնքապետարանում ստեղծել «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման համայնքային հանձնաժողով»:
2. Հաստատել հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելված 1 – ի:
3. Հաստատել հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված 2 – ի:
4. Հանձնաժողովի ստեղծման մասին որոշման մեկական օրինակներ տրամադրել մարզային հանձնաժողովին և մարզային փրկարարական վարչությանը / հավելվածներով/:
5. Որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ 2012թ.ԱՊՐԻԼԻ 27-Ի թիվ 6 ՈՐՈՇՄԱՆ

ԿԱԶՄ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԳԱՐԾՈՂ ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Հանձնաժողովի նախագահ՝ Մարգարյան Ռազմիկ

2. Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Կարապետյան Ռոման
3. Քարտուղար՝ Ալեքսանյան Սեդրակ

Անդամներ՝

4. Հակոբյան Ալեքսան / գյուղատնտեսության գծով մասնագետ/
5. Մարգարյան Վարդան / քաղաքաշինության գծով մասնագետ/
6. Սիմոնյան Վերմիկ / ֆինանսական գծով մասնագետ/
7. Մարտիրոսյան Լեյլի /առողջապահության գծով մասնագետ/
8. Սարգսյան Տիգրան /անասնաբուժական գծով մասնագետ/
9. Մարգարյան Հայկ / ոռոգման համակարգի մասնագետ/
10. Խաչատրյան Խաչիկ / գազամատակարարման ցանցի աշխատող/
11. Մելոյան Վազգեն / էլեկտրամատակարարման ցանցի աշխատող/
12. Գալստյան Գառնիկ / ջրամատակարարման ցանցի աշխատող/

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ 2012ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 27 – Ի ԹԻՎ 6 ՈՐՈՇՄԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Սույն աշխատակարգով սահմանվում է Արմավիրի մարզի Եղեգնուտի համայնքի տարածքում գնահատման ու հաշվառման ենթակա արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքների կազմակերպումը:

2. Եղեգնուտի համայնքի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման գործընթացը՝ կախված ընդգրկման ծավալից, հետևանքների բնույթից և նշանակությունից, համապատասխանաբար կազմակերպվում է համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված և մշտական գործող հանձնաժողովի կողմից:

3. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները հաշվառվում են դրանց առաջացման պատճառների ուսումնասիրման ու վերացման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցման համար միջոցներ ձեռնարկելու նպատակով:

4. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համար՝

1) կազմվում է վնասված գույքի ցանկը՝ նշելով դրանց տեսակը, գտնվելու վայրն ու համառոտ բնութագիրը.

2) ուսումնասիրվում և գնահատվում է վնասված գույքի վիճակը.

3) գնահատվում է գույքին պատճառված վնասի չափը:

5. Եթե արտակարգ իրավիճակների հետևանքով զոհվել են մարդիկ, կամ մարդկանց առողջությանը պատճառվել է վնաս, ապա Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչությունից դեպքի մասին տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը և. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով:

6. Տեղեկատվությունը ներառվում է՝

1) դեպքի օրը, ամիսը, տարեթիվը, ժամը և վայրը.

2) կուժողների ազգանունները, անունները, հայրանունները, նրանց ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, բնակության և աշխատանքի վայրերը.

3) դեպքի վայր մեկնած՝ փրկարարական աշխատանքներ իրականացնող խմբի (անձանց) կազմը (անձնական տվյալները).

4) դեպքը բնութագրող այլ հանգամանքներ՝ իրավիճակը, եղանակային պայմանները և այլն:

7. Եղեգնուտի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման նպատակով ստեղծված համայնքային հանձնաժողովը գործում է հետևյալ ուղղություններով՝

1) գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատում.

2) բնակչության գույքին հասցված վնասների գնահատում.

3) ենթակառուցվածքների հասցված վնասների գնահատում.

4) բժշկասանիտարական հնարավոր վնասների գնահատում.

8. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովի կազմում՝ ըստ ուղղությունների ընդգրկվում են՝

1) մասնագետներ գյուղատնտեսության, ֆինանսական, անասնաբուժության ոլորտից, համայնքի բժշկական անձնակազմից, գազամատակարարման, ջրամատակարարման, էլեկտրամատակարարման և ոռոգման համակարգերի աշխատակիցներից:

2) հանձնաժողովի աշխատաքներին հրավիրվում են մասնագետներ Արմավիրի մարզային փրկարարական վարչությունից և մարզային հակահրդեհային տեսչությունից:

9. Համայնքային հանձնաժողովների կողմից կազմված ակտերը քննարկվում են մարզային հանձնաժողովում և համաձայնեցված ակտերը ներկայացվում են հանրապետական հանձնաժողով:

10. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների մասին վերջնական տեղեկատվությունն ամփոփում և հրապարակում է արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողովը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆՈՒՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРИ МАРЗ
ЕГЕГНУТИ ГЮГАПЕТАРАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

Համայնքի ղեկավար

ՈՐՈՇՈՒՄ

13.Ապրիլի 2012 թ. N 05

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ՝ ՀԵՐՄԻՆԵ ՍԱՄՎԵԼԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենքի 179[1] հոդվածով 2 – րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի բաժնի 2012թվականի ապրիլի 13 - ի թիվ 4815/2161 գրությունը և վարչական իրավախախտման մասին թիվ 213 արձանագրությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնուտի գյուղական համայնքի բնակչուհի՝ Հերմինե Սամվելի Գևորգյանին ենթարկել վարչական տույժի մեկ հազար հինգ հարյուր դրամի չափով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյան

2011թ. ապրիլի 13

գ. Եղեգնուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆՈՒՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРИ МАРЗ
ЕГЕГНУТИ ГЮГАПЕТАРАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

01.Ապրիլի 2012 թ. N 02

ՍԱՄՎԵԼ ԼԵՈՆԻ ԳԵՈՐԳՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 1 – ին մասի 17 կետով, Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» 14 –րդ հոդվածով և հիմք ընդունելով Ս. Գեորգյանի դիմումը .

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Սամվել Լևոնի Գեորգյանին 2012 թվականի ապրիլի 1 – ից ընդունել աշխատանքի, որպես այգեպան հուշարձանի շրջակայքի կանաչապատման և այգու խնամքի համար:
2. Քաղ՝ Սամվել Լևոնի Գեորգյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր, աշխատավարձը՝ ըստ հաստիքացուցակի:
3. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից :

Համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյան